Հայտարարություն

Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագիր
Վարկ թիվ 5398-ԱՄ

ՀՀ ֆինանսների նախարարության <<Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն>> պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի <<Սոցիալական պաշտպանվածության վարչարարության երկորդ ծրագիր>> վարկային ծրագրի շրջանակում **Սոցիալական երաշխիքների ապահովման մասնագետի** հանձնարարականի իրականացման համար խորհրդատու ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

ՀՀ ԱՍՀՆ-ն նախատեսում է վարձել անհատ խորհրդատու, որը ՍՊՎԾ-2-ի ԾՀԳ-ում կաշխատի, որպես սոցիալական երաշխիքների ապահովման մասնագետ, ով պետք է՝

- մեթոդական ու մասնագիտական աջակցություն ցուցաբերի ՍՊՎԾ-2-ի շրջանակներում իրականացվող գործողությունների նախագծմանը և իրականացմանը՝ ապահովելով վերջիններիս համապատասխանությունը ՀՀ համապատասխան օրենսդրությանը, Համաշխարհային բանկի՝ սույն ծրագրին առնչվող քաղաքականություններին (մասնավորապես ԳՔ/ԲԸ 4.01 բնապահպանական գնահատման և ԳՔ/ԲԸ 4.12 հարկադիր վերաբնակեցման/տեղափոխման ընթացակարգերին),
- նպաստի ՍՊՎԾ 2-ի սոցիալական կայունության ապահովմանը՝ կանխելով վերջինիս անցանկալի սոցիալական ազդեցությունները, նվազեցնելով կամ մեղմացնելով դրա պոտենցիալ սոցիալական ռիսկերը, վերահսկելով ծրագրի սոցիալական ազդեցությունների մասին տվյալների հավաքման, ծրագրի իրականացման և կառավարման ընթացքում սոցիալական անվտանգության կանոնների պահպանման գործընթացները,
- նպաստի բնակչության առավել խոցելի խմբերի արդյունավետ ներառմանը և մասնակցությանը ծրագրին և նրանց սոցիալական վիճակի վրա ծրագրի գործողությունների ունեցած դրական ազդեցության աստիճանի բարձրացմանը:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հունիսից՝ վեց ամսյա ժամկետով՝ երկարացման հնարավորությամբ:

Սոցիալական հարցերով մասնագետը պետք է ունենա՝

Սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացման մասնագետը պետք է ունենա՝

- բարձրագույն մասնագիտական կրթություն սոցիոլոգիայի, սոցիալական աշխատանքի կամ սոցիալական գիտության այլ ճյուղում,
- համապատասխան ոլորտում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ,
- զարգացման ծրագրերում սոցիալական կայունության հարցերի հետ առնչվելու փորձ, ներառյալ գենդերային զգայունությունը, սոցիալական այլ

չափանիշներով խոցելի խմբերի ներգրավումը, շահառուների հետ խորհրդակցությունը, քաղաքացիների ներգրավումը և բողոքների բավարարումը,

- միջազգային ֆինանսական հաստատություններում սոցիալական երաշխիքների քաղաքականությունների հետ կապված փորձ, ինչպես նաև այդ երաշխիքների պահանջներին ծրագրի համապատասխանությունն ապահովելու փորձ,
- սոցիալական վերլուծությունների նախագծման և իրագործման մեծ փորձ,
- միջազգային ֆինանսական հաստատությունների սոցիալական անվտանգության նորմերի և քաղաքականությունների հետ կապված փորձ և դրանց՝ նախագծի համապատասխանեցումն ապահովելու փորձ,
- ազգային սոցիալական օրենսդրության լավ իմացություն,
- գերազանց կազմակերպական և հաղորդակցական հմտություններ,
- հայերենի և անգլերենի գերազանց իմացություն (սահուն տիրապետում),
- համակարգչային գրագիտություն:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչեւ **սույն թվականի հունիսի 05 -ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
<< Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն >> պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տ.Մեծ 4
Հեռախոս. (037410) 528742, (037411) 910581
Ֆաքս. (037410) 545-708
Էլ. փոստ. info@ffpmc.am